



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ.


Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Գ. Ի. Տ. Ե. Լ. Ի. Բ.

Թ. Ե. Մ. Ա. Կ. Ա. Ն. Տ. Ե. Լ. Ե. Կ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Բ.

Վ. Ի. Հ. Ա. Կ. Ի. Ս. Հ. Ա. Յ. Ո. Յ. Ն. Ա. Ի. Ի. Զ. Ե. Ի. Ա. Ն. Ի. Ե. Ի. Պ. Ե. Ս. Ա. Բ. Ա. Պ. Ի. Ո. Յ.

Ա. Տ. Ե. Ն. Ա. Կ. Ա. Ն. Կ. Ա. Բ. Գ. Ա. Դ. Բ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Բ.



Մայիսի 6. — Ս. Էջմիածնայ Սին-
հոդոսին հրամանագրովը, որ ի
24 Մարտի ընդ համարաւս 423,
արձակուեցան հարկատուութեան
վիճակէ, եւ դասեցան Վիճակիս
եկեղեցականաց կարգը, Նախի-
ջեւանի եկեղեցեաց դպիրքն Ստեփա-
նոս Պիւլպիւլեան եւ Պետրոս Հա-
լասեանց:

Մայիսի 10. — Հին Խրիմու Ս. Աստուա-
ծածնի եկեղեցւոյն ծերունի դպիրը Պետ-
րոս ձէնանեանց վճարելով իւր մահկանացու կե-
նաց ընծացքը, վախճանեցաւ ի Հին Խրիմ:

1 ՅՈՒՆԻՍԻ 1863.

Մայիսի 20. — Նախիջեւանի Ս. Լուսաւորիչ
Մայր եկեղեցւոյն Աւագ քահանայ Աստուածատուը
եղիայեան Շաբշնիքեանց, իւր սուրբ պաշտօնը
առաքինի վարուք եւ ամենայն ջերմեռանդու-
թեամբ 36 տարի կատարելէն յետոյ՝ 73 տարուան
ծերունազարդ հասակին մէջ կնքեց իւր ժամա-
նակաւոր կեանքը եւ փոխեցաւ յաստեացս: Այս
բազմաբղիւն եւ բարեսիրտ քահանայն, որ մեծ
բարի օրինակ էր Նախիջեւանի ամենայն քահա-
նայից՝ իւր եռանդուն նախանձաւորութեամբը
փառացն Աստուծոյ եւ վայելչութեան եկեղեցւոյն
Քրիստոսի, եկեղեցական երաժշտութեան քաջա-
հմուտ, եւ քաղցր ու զուարթ եւ խոնարհամիտ

ընաւորութեամբ ամենեցուն սիրելի, տարի մը առաջ՝ ըստ խնդրոյ ժողովրդականացն առաջարկուած էր ի վարձատրութիւն ոսկեղէն քահանայական խաչի, եւ Ս. Էջմիածնի Սիւնիոյ դոսին արդէն տրուած լիովին հաւանութեամբ՝ այս օրերըս պիտի ընդունէր անշուշտ ի վեհափառ Հայրապետէն ազգիս Հայոց այն խաչը՝ իբրեւ նշան անթառամ պսակին՝ զոր փութացաւ երթալ ընդունել յերկինս ի հասարակաց Պարգեւատուէն:

Մայիսի 20. — Առաջնորդական Ատեանս ընդունեցաւ ի Գեր. Տեղակալէ Առաջնորդութեան Վիճակիս հետագայ առաջադրութիւնը, եւ կրփութայ հետ զհետէ կատարել մէջի պատուէրները:

« Ըստ անհրաժեշտ հարկի պաշտաման մերոյ, ի 14 Ապրիլ ամսոյ, յետ տալոյ Ատենիդ առանձին առաջադրութեամբ զպատուէրսն կարեւորս՝ փութացաք ելանել յայցելութիւն քաղաքաց Վիճակիս որ ի գաւառին Քերտոնի եւ ի Պեսարապիա: Բովանդակեալ իսմին զպէսպէս փոփոխութիւնս եւ զբարեկարգութիւնս զորս արարաք յայսմ այցելութեան մերում, առաջադրեմք Ատենիդ փութալ ի գործադրութիւն նոցին պաշտօնական կարգաւ:

Ա. եկեղեցին մեր որ յՍտեփան գտանի իմաքուր եւ ի բարեկարգ վայելչութեան. միայն թէ պակասէին անդ մինչեւ ցայժմ զանգակք եւ զանգակատուն. որոյ վասն յորդորեցաք զբարեպաշտ իշխանաւորս տեղւոյն նուիրել եկեղեցւոյն հանգանակաւ զանգակս, եւ նոքա յօժարակամ սիրով յանձին կալան հոգալ զծախսն առ այն կարեւորս: — Հաշիւք երէցփոխանին, որ է եղիա Աղա Քրըմեան, ըստ ամենայնի ի կարգի երեւեցան եւ արդիւնաւորք, եւ եռանդուն ծառայութիւն նորա առժանի շնորհակալեաց: — Ժողովրդական Դպրոցն՝ յորում ուսանին աշակերտք ոչ աւելի քան զքսան, կարօտէր արձուն հսկողութեան Հոգաբարձուաց. վասն որոյ իմի վայր կոչեալ զժողովուրդ տեղւոյն, համախոհ հաւանութեամբ նոցին կարգեցաք Հոգաբարձուս զերէցփոխանն եղիա Քրըմեան, զՅովհաննէս Մելէշեան եւ զՍտեփան Պօղոսեան, որոց եւ յանձն արարաք զուսումնական, զբարոյական եւ զտնտեսական խնամս Դպրոցին:

Բ. Տարածայնութիւնքն ծագեալք ի հերուն հետէ ի ժողովուրդս Ազգերմանի՝ դադարեցան կրկնակի ժողովովք գլխաւորաց ժողովրդեանն, եւ որոշմամբ պաշտամանց քահանային եւ վարժապետին բարձաւ իմիջոյ գլխաւոր պատճառ տրժգոհութեանցն եւ հակառակութեանց: — Ժողովրդական Դպրոց տեղւոյն՝ յորում ուսանին աշակերտք վաթսուն, գտաւ ի բարեկարգութեան եւ ի յառաջադէմ զարգացման, մանաւանդ իմաքուր հայախօսութեան եւ յազատութեան հաւանութեան

ի գրոց լեզու, նոյնպէս եւ ի Իբերականութեան, յԱշխարհագրութեան եւ ի Թուաբանութեան: Հսկողութիւն հոգաբարձուացն Աստուածատրեան եղբարց արժանի ցուցաւ հրապարակական շնորհակալեաց. միայն ի թեմեւացւոցանել զպարտաւորութիւն նոցին՝ պատշաճ դատեցաք յաւելուլ ի նոսա իբրեւ հոգաբարձուս զՄանուկ Աղա Մարութեան եւ զԿարապետ Դպիր Աւագեան, որոց եւ տուաք կանոնս գրաւորս ի 22 Ապրիլի ընդ համարաւ 127:

Գ. Ի Բիշնեւ քաղաքի բարեկարգութիւն եւ մաքրութիւն Դպրոցին, որ յանձնեալ գտանէր ի ձեռն Մարտիրոսի Աւագ սարկաւազի Թոսունեանց՝ գովելի գտաւ ըստ ամենայնի: Միայն թէ շինուած եկեղեցւոյն, որպէս եւ խաչկալն մեծ կարօտ գոլով նորոգութեան, պատուէր տուաւ երէցփոխանին հաւաստեալ տեղեկանալ ծախուցն առ այն կարեւորաց, եւ ծանուցանել Ատենիդ, որպէս զի առանց այլ եւս յապաղանաց եղիցի նորոգութիւնն: — Ստեփանոս քահանայն Ամասեանց, որ եւ անդամ էր Հոգեւորական Կառավարութեանն Պեսարապիոյ, ըստ պէսպէս պատճառաց փոխադրեցաւ անտի, եւ կարգեցաւ ի հիմնութիւն Յովհէյ, Պելց եւ Հօթին քաղաքաց եւ զԻւղօրէից նոցին. եւ ի տեղի նորին հաստատեցաւ ի Բիշնեւ Մարտիրոս քահանայն Քշալեանց, եւ սա որ ժամանակաւորապէս կարգեալ էր յայն պաշտօն, իմիջոցի քանի ինչ ամսոց իւրովն խոհականութեամբ արժանի գտաւ վարձատրութեան կերպասեայ ծիրանեզոյն փիլոնի՝ ըստ խնդրոյ եւ միջնորդութեան հասարակութեան տեղւոյն: — Խաչատուր քահանայն Մրզայեան՝ արդարացաւ յամբաստանութեանցն եղելոց զնմանէ: — Վիճակային եւ առաջնորդական կալուածք տեղւոյն կարօտին մեծածախ նորոգութեանց եւ կարկատանաց, վասն որոյ եւ ըստ այսմ հարկ էր առնել ընդ փոյթ զառանձին տնօրէնութիւն: — Տրտունջք ժողովրդականացն զքահանայից տեղւոյն իսպառ դադարեցին, եւ երկբայութիւնքն որ զերէցփոխանական հաշուոց՝ մանրազնին ըննութեամբ հաշուեմատենիցն փարատեցան:

Ժողովրդական դպրոցն Բիշնեւի կարօտի հայկաբան ուսուցչի, եւս եւ վարժապետի ռուս լեզուի: Ի դարման այսր ամենայնի եւ յառաւել եւս բարեկարգութիւն դպրոցին արժան դատեցաք կարգել Հոգաբարձուս զԱւետիս Աղա Յոհանով, զԴաւիթ Աղա Անդրէասեան Չաքարեանց եւ զԿարապետ Աղա Կոյալեան:

Դ. Ի Հնչեշտ աւանի, որ սեպհական կալուած է Մանուկ Պէյ իշխանապետի, ներքին բարեկարգութիւնք եկեղեցւոյն ի վայելչութեան են. սակայն ցանկալի է վաղ ընդ փոյթ վերանորոգութիւն նորին. եւ ուրախութեամբ սրտի տեսաք զի քաջատոհմիկ Պայազատն Յովհաննէս Մուրատ Պէյ

Մանուկեան Միրզայեանց տայ արդէն հանդերձել զատաղմս եւ զքարինս շինուածոյն :

Ե. Ժողովրդոցն Յրմէյ քաղաքի անհնարին գոլով ունել առանձին քահանայ, յանձն արարաք զնոսին հովուութեան Ստեփանոսի քահանայի Ամասեանց՝ հանդերձ Ժողովրդովքն Պելց եւ Հօթին քաղաքաց. իսկ զնշան քահանայն Տէր Նշանեանց՝ տեղափոխեցաք յեւպատորիա, ուր պարտի հասանել յամսօրեայ ժամանակի: —Եւ որովհետեւ իմէջ քաղաքացն այնոցիկ կեդրոնական իմն տեղի համարի Պելց քաղաք, ըստ ջերմեռանդն խնդրանաց Ժողովրդականաց տեղւոյն արժան դատեցաք կարգադրել՝ զի պատրաստեսցի անդ Աղօթարան մի փոքրիկ, եւ քահանայն կողմանցն ոչ եւս յՅրմէյ նստցի, այլ ի Պելց քաղաքի :

Ջերմեռանդն աստուածալաշտութիւն համագեաց կողմանցն առհասարակ արժանի է առանձինն շնորհակալութեան, մանաւանդ աստուածսիրութիւն եւ ազգասիրութիւն Յակոբ Աղայի Տէրտէրեան Բոբովիչ, Սարգսի Յովհաննէսեան Չերքէզեանց եւ Խաչկի Սիմէոնեան Ֆոքշանեանց, յորոց վերջինդ յանձն էառ զշինութիւն խաչկալի Աղօթատանն Պելցի ըստ ձեւոյն զոր առաքեսցուք առ նա :

Շինութիւն եկեղեցւոյն Յրմէյի, զոր կանգնէ ազնուական Դաւիթ Անդրէասեան Ջաքարեանց, դեռ եւս թերակատար կայ. վասն որոյ պատուէր տուաք Ամասեանց քահանային բարեկարգել զառժամանակեայ Աղօթարան տեղւոյն, որպէս զի յերթալ քահանային անդր եռամսեայ այցելութեամբ՝ մի՛ զրկեսցին Ժողովրդականքն ի ժամերգութեանց եւ ի մատուցմանէ խորհրդոյ պատարագին :

Տէր Մըրընտէն Գեղջ, որ է մերձ ի Պելց քաղաք, բարեպաշտօն Յակոբ Աղա Աստուածատրեան Տէրտէրեանց Բոբովիչ հասցեալ որդեգրել ըստ մերումս ընտրութեան զմի իմրիավարժ աշակերտաց Խալիպեան Ուսումնարանին, եւ անունել զնա *S k e r s k e r e a n U a n*. Եւ առ այս արդէն հատոյց 250 բուլլի թոշակ տարեկան՝ խոստանալով հատուցանել զայն ամի ամի ի 23 Ապրիլի. եւ վասն մշտնջենաւորելոյ զայս գործ ազգասիրութեան իւրոյ նուիրեաց այժմէն յօգուտ Ուսումնարանին տասն հազար բուլլիս արծաթոյ, այսու դաշամբ զի այն դրամ ցօր մահուան իւրոյ շահեցուցի տոկոսեօք ի ձեռն հաւատարիմ անձանց օրինաւոր գրաւականաւ յանուն Ուսումնարանին, եւ տոկոսին յաւելցի իմայր գու-

մարն, որպէս զի եւ յետ մահուան իւրոյ՝ ի դադարել վճարման 250 բուլլեաց, Խալիպեան Ուսումնարանն մշտնջենապէս վարժեսցէ զմի Տէրտէրեան Սան իտոկոսեաց այնր դրամոյ : Առ այս պատրաստի արդ ի Տպագրատան մերում վայելուչ թերթ շնորհակալութեան վասն առաքելոյ առ նա ստորագրութեամբ մերով եւ զլիաւոր Խնամակալի Ուսումնարանին, եւ նկարի կենդանագիր բարերարին իդնել ի դահլճի Ուսումնարանին. իսկ ի ձեռն Հոգեւոր կառավարութեանց եւ քահանայից Վիճակիս պարտ է Ատենիդ հրատարակել ամենայն ուրեք զջերմեռանդն նուիրատուութիւն Առնն Ազգասիրի իբարի օրինակ այլոց :

Ձ. Եկեղեցին Հօթին քաղաքի գտաւ յանշուք պայմանի : Յովհաննէս Աղա Լուսեղենեանց, որ երբեմն երէցփոխան էր եկեղեցւոյն, գոլով արդ ծանրաբեռնեալ պաշտամամբ Քաղաքագլխոյ, հրաժարեալ էր յերէցփոխանական պարտաւորութենէն. ուստի համախոհ հաւանութեամբ սակաւաթիւ Ժողովրդականաց տեղւոյն առաջի մեր՝ կարգեցաւ երէցփոխան եղբայր Նորին Յակոբ Լուսեղենեան. զորմէ եւ առաջադրեմ Ատենիդ՝ յետ հաստատելոյ զնա յայն պաշտօն՝ հրամայել քահանային Ամասեանց առնուլ զամենայն զիաշխուս, զկալուածս եւ զանօթս եկեղեցւոյն ի նշան քահանայէ Տէր Նշանեան, եւ յանձնել նորոյ երէցփոխանին, որում եւ արդէն պատուիրեալ եմք հոգ ունել ներքին բարեկարգութեան եւ կարկատանաց եկեղեցւոյն :

Ե. Վասն եկեղեցական տանց եւ կրպակաց Հօթին քաղաքի, որք կարօտին վերանորոգութեան ծածկութիցն առհասարակ, պատուէր տուեալ է մեր նորընտիր երէցփոխանի եկեղեցւոյն՝ զի ձեռնտուութեամբ եղբօր իւրոյ Քաղաքագլխոյ տեղւոյն՝ Յովհաննու Լուսեղենեան՝ հոգ տարցի առնել զնորոգութիւնսն յարդեանց կալուածոցն այնոցիկ. առ որ հարկ է Ատենիդ առաքել մատեան մի ժապաւինեալ՝ ի գրել ի նմին զճախս նորոգութեանցն :

Ը. Աւագ քահանային Սիմֆերոփոլի Տեառն Յակոբայ Սուրենեանց, որ ըստ մերում հրամանի գտաւ մեզ ճանապարհորդակից եւ գործակից յամենայն վերոգրեալ հանգամանս վիճակային այցելութեան, պարտ է տալ առ այժմ՝ զգրաւոր շնորհակալութիւն, վերապահելով մեզ զառաւելագոյն ինչ զվարձատրութիւն վասն անխոնջ եւ հաւատարիմ վաստակոցն : »